

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ն. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՊՏՀ-ի «Կառավարչական հաշվառում»
ամբիոնի հայցորդ

Պետական ներքին ֆինանսական հսկողությունը (ՊՆՖՀ) կառուցվածքային մոդել է, որն ուղղորդում է կառավարություններին հանրային ծառայությունների մատուցման համար ժամանակակից կառավարման և հսկողության միջավայր ձևավորելու գործընթացում: Դրա նպատակն է պատշաճ հավաստիացում տալ, որ գործարքները համապատասխանում են որակյալ ֆինանսական կառավարման, թափանցիկության, արդյունավետության, օգտավետության և տնտեսման սկզբունքներին, ինչպես նաև համապատասխան օրենսդրությանը:

Արդյունավետությունը սահմանվում է որպես նվազագույն ծախսերով ծառայությունների առավելագույն ծավալի մատուցում: Ծառայությունների մատուցումը կամ գործունեությունն արդյունավետ է համարվում, եթե համապատասխանում է դրա համար սահմանված նպատակներին: Պետական ներքին ֆինանսական հսկողության հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ հանրային ծառայությունների մատուցման համար գոյություն ունի կառավարչական պատասխանատվություն: Սա նշանակում է, որ պետական եկամտային և ծախսային կենտրոնների բոլոր մակարդակների կառավարիչները պետք է հաշվետու լինեն իրենց կողմից իրականացվող գործողությունների համար, ընդ որում՝ ոչ միայն գործառնական, այլև ֆինանսական կառավարման և հսկողության քաղաքականության մասով:

Կառավարում՝ նշանակում է հանրային ծառայությունների մատուցում սեփական նպատակներն իրագործելու համար: Սա շատ ավելի ընդգրկում գաղափար է, քան բյուջետային (օրինակ՝ աշխատավարձի կամ գումարների) ծախսերի կառավարումը: Կառավարում՝ նշանակում է ապահովել, որ կատարվող ծախսերն իրականում տան արժեքավոր արդյունք: Սա այն է, ինչ կառավարիչները պետք է անեն («ինչի համար պատասխանատու են») և ինչի մասին պետք է զեկուցեն իրենց ղեկավարներին («ու՞մ հաշվետու են»): Որպեսզի կառավարչական հաշվետվողականությունն իրականում իմաստ ունենա, նախ պետք է առկա լինի կազմակերպչական կառուցվածք, որը հնարավորություն է տալիս բարձրագույն ղեկավարներին լիազորություններ պատվիրակել ավելի ցածր մակարդակի կառավարիչներին:

Պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգն ունի երեք սյուն (բաղադրիչներ).

1. կառավարչական պատասխանատվությունը (ֆինանսական կառավարման և հսկողության համակարգեր),

2. ֆունկցիոնալ անկախ ներքին աուդիտը (ՆԱ համակարգեր),

3. ներդաշնակեցման կենտրոնական միավորը (ՆԿՄ)՝ առաջին երկու սյուների վերաբերող մեթոդաբանությունը և ստանդարտները մշակելու համար:

Ֆինանսական կառավարումը և հսկողությունը համակարգ է, որի միջոցով

կազմակերպությունների նպատակների իրագործմանն աջակցելու նպատակով ուղղորդվում և (վերա)հսկվում են հանրային ծառայությունների ֆինանսական հարցերը: Կառավարիչը պատասխանատու է ռեսուրսների արդյունավետ, խնայողաբար և օգտավետ (էֆեկտիվ) օգտագործման համար: Պետական ներքին ֆինանսական վերահսկողության մեխանիզմները տալիս են կառավարչին այս պարտականությունները իրականացնելու գործիքներ, և կառավարիչը պետք է հասկանա գործիքներից օգտվելու և դրանք գործառնական առկա պայմաններում կիրառելու կարգը: Այս պարտականությունների իրականացումը հնարավոր դարձնելու համար կառավարչին անհրաժեշտ գործիքները ներառում են բյուջեներ և կանոնավոր ու համակարգված հաշվապահական ու ծախսային տվյալներ՝ ներքին աուդիտի խորհրդակցությամբ:

Մեծ է ներքին աուդիտի համակարգի կարևորությունը կառավարման ներկա գործառնություններում: Այն անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառնությո է, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Ներքին աուդիտն օգնում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված ձևով գնահատման ու բարելավման միջոցով:

Ներքին աուդիտը պետք է իրականացվի հավաստիացման և խորհրդատվական ծառայությունների մատուցմանն ուղղված որոշակի աուդիտորական առաջադրանքների միջոցով: Աուդիտորական առաջադրանքը ներքին աուդիտի կոնկրետ առաջադրանքն է կամ ուսումնասիրությունը, որը ներառում է հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ: Աուդիտորական առաջադրանքները սահմանվում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից:

Չավաստիացման ծառայությունների համար իրականացվող աուդիտը պետք է կազմված լինի ներքին աուդիտորի կողմից ապացույցների օբյեկտիվ գնահատումից, որպեսզի անկախ դիրքորոշում կամ եզրակացություն ներկայացվի գործընթացի, համակարգի կամ աուդիտում ներառված այլ բաղադրիչների վերաբերյալ:

Չավաստիացման ծառայությունների համար իրականացվող յուրաքանչյուր աուդիտի խնդիրներն ու շրջանակը սահմանվում է աուդիտորական առաջադրանքով: Աուդիտը պետք է իրականացվի հետևյալ փուլերով՝ պլանավորում, փաստացի գնահատումների իրականացում, հաշվետվություն և հետագա գործողություններ՝ ներկայացված առաջարկությունների կատարմանը հետևելու նպատակով:

Չավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգի վրա հիմնված մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների միաժամանակ (համատեղ) կիրառմամբ:

Խորհրդատվական ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի, ուսուցման և ռիսկերի կառավարման, հսկման և կառավարչական գործընթացի բարելավմանն

ուղղված այլ ծառայությունների տրամադրումից: Խորհրդատվական ծառայությունների համար նշանակված աուդիտի իրականացման ընթացքում ներքին աուդիտորը չի կարող իրականացնել կազմակերպության կառավարման որևէ գործառույթ:

Խորհրդատվական ծառայությունների նպատակով նշանակված աուդիտը նախաձեռնում է կազմակերպության ղեկավարը, և յուրաքանչյուր նման աուդիտի խնդիրներն ու շրջանակը պետք է սահմանվեն աուդիտորական առաջադրանքով:

Ներքին աուդիտը պետք է իրականացվի ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և հետևյալ սկզբունքների համաձայն՝

- **Գործառնական անկախությունը** ներքին աուդիտի գործառույթի՝ կազմակերպության կառավարչական գործառույթներից առանձնացված իրականացումն է:

- **Օբյեկտիվությունը** ներքին աուդիտորների կողմից աուդիտի ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում մասնագիտական անշահախնդրության անվերապահ ցուցաբերումն է: Ներքին աուդիտորներն իրականացնում են բոլոր հանգամանքների հավասարակշռված և համարժեք գնահատում և չեն ենթարկվում սեփական հետաքրքրությունների կամ այլ անձանց դատողությունների անհարկի ազդեցությանը:

- **Կարողունակությունը և իրավունակությունը** ներքին աուդիտորների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների և իրենց պարտականությունները կատարելու համար այլ փորձառությունների ու իրավասությունների տիրապետումը և կիրառումն է:

- **Անկողմնակալությունը (ազնվությունը)** ներքին աուդիտորների կողմից իրենց աշխատանքների ազնիվ, հոգատար և պատասխանատու ձևով իրականացումն է: Ներքին աուդիտորները պետք է գործեն օրենքի համաձայն և իրականացնեն օրենքով և մասնագիտական ստանդարտներով պահանջվող բացահայտումները:

- **Գաղտնիությունը** ներքին աուդիտորների կողմից իրենց աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանումն է: Ներքին աուդիտորները պարտավոր են առանց համապատասխան լիազորության չիրապարակել և չտրամադրել իրենց գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ներքին աուդիտի ծառայությունն ապահովում է անհրաժեշտ տեղեկատվություն կազմակերպության գործունեության վերաբերյալ և հաստատում կառավարիչների հաշվետվությունների հավաստիությունը:

Ներքին աուդիտի միջոցով լուծվում են հետևյալ խնդիրները՝

- կազմակերպության տրամադրության տակ գտնվող ակտիվների օգտագործման արդյունավետության նկատմամբ վերահսկողության սահմանում,

- ներտնտեսական վերահսկողության ընթացակարգերի իրականացման հաստատում,

- ներքին վերահսկողության համակարգի գործունեության արդյունավետու-

թյան վերլուծություն,

- կառավարչական տեղեկատվության որակի գնահատում:

Կառավարման գործառնությունների օրինականության, արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության երաշխավոր հանդիսացող աուդիտի համակարգի և հատկապես ներքին աուդիտի համակարգի կատարելագործումը ՀՀ հանրային հատվածում կհանգեցնի պետական կառավարման արդյունավետության բարձրացման: Ներքին աուդիտի համակարգի լիարժեք ներդրման արդյունքում ակնկալվում է ընդհանուր պետական եկամուտների և ծախսերի թափանցիկության, հաշվետվողականության բարձրացում, որը կհանգեցնի նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման:

РОЛЬ ВНУТРЕННЕГО АУДИТА В СИСТЕМЕ ГВФК

Н. Л. Даниелян

Государственный внутренний финансовый контроль (ГВФК) – это интегрированная модель внутреннего финансового контроля, которая была разработана Еврокомиссией для создания в государственном секторе внутренних систем контроля, соответствующих международным стандартам. Во многих европейских странах данная модель является стандартной.

Внутренний аудит имеет большую роль в системе ГВФК. Посредством независимости внутреннего аудита, операций по объективному удостоверению и консультации правительство намерено содействовать увеличению эффективности и улучшению деятельности бюджетных организаций.

Введение системы внутреннего аудита, как и ожидается, приведет к прозрачности в общей вырубке и расходов государства, к повышению ответственности, которая также будет способствовать снижению коррупционных рисков.

THE ROLE OF INTERNAL AUDIT IN PIFC SYSTEM

N. L. Danielyan

PIFC is an integrated and operational model developed by the European Commission for re-engineering internal control systems in the public sector in line with international standards. Many European countries use PIFC as a benchmark for modernizing their public sector control environment.

The internal audit has a great role in PIFC system. By means of independence of internal audit, operations under the objective certificate and consultation the government intends to promote increase in efficiency and improvement of the budgetary organizations activity.

It is intended that full implementation of the internal audit will promote transparency of total state costs and revenues, increase accountability, which will also promote to reduce the risks of corruption.